

եալ խօսքերով. Ներսէսը՝ «մեծ հոգեւոր», «սուրբ այր», «ամենազով վարդապետ» (*). մի ուրիշ յիշատակարանի մէջ 1280 թուին «արդիւնակատար վարդապետ» (**): Ստեփանոս գրիչը որակում է նորան որպէս «գիտնական եւ արդիւնական հոգեւոր, որ զլաւ ժարամիտոսն ծնանի երկաւք բանին ճշմարտութե» (***): Նման որակումներով յիշուում է եւ Եսայի Նչեցին. վարդան Կիլիկեցի ներհուն գրիչը յիշել է խնդրում «զամպս գերագոյն հրաշիւք լուսատու ցաւզ զվարժապետս իմ Եսայի» (****): Նոյն գրիչը մի այլ տեղ մաղթում է, որ Յիսուս «հատուցանէ զգործս բարի, Եսայիս վարժապետի, զիմանալի հաց ծասկողիս» (*****): Մկրտիչ Թեղենեաց բարունին անուանում է նորան «հոգէհանճար, գերիմաստ բարունապետ եւ հայր հոգեւոր» կամ «քաղցրահանճար փրկիստփայ եւ բանիւրուն... տիգերալոյս բարունապետ» (*****): Կիրակոս Երզնկացին 1318 թուին «մեծ բարունապետ բոլոր Հայաստանեայց» է կոչում, իսկ Յակոբ Թագորցին «ներհուն հոգեւոր հանուրց հայկազանց եւ լուսատու ջահ մանկանց եկեղեցւոյ» (*****): Դաւիթ Կետիկեցին 1328 թուին Առաքել վարդապետի համար գրած Աստուածաշնչի մէջ «կորովաբան եւ ծերացեալ ամենայն իմաստութեամբ՝ եւ զարդարեալ խոհականաւ եւ արիականաւ, տելէտ (δ τελεωτης - կատարեալ) իմաստից եւ ներհուն վարժապետ», իսկ ստացող Առաքել վարդապետը «լուսաւոր այր Աստուծոյ, մեծ սոփեստոս», փայլող «ի դահա իմաստութեան իբրեւ զարեգակն ի կորնթարթն վերին» (*****): Ստեփանոս Օրբէլեանը արեւելեան վարդապետների մէջ ամենից նշանաւորն ու ազդեցիկը նաեւ իւր իշխանական գիրքով Նչեցու եղեկիէլի մեկնութեան ընծայականի մէջ նրան անուանում է «յիսուսական համալսարանացն պետ», «գալարապետ անճառ գալորացն», «համակ զիւան անհասական խորոցն» (*****):

Եսայի Նչեցու հոգակի եւ հեղինակութեան լաւագոյն ապացոյց կարող է համարուել եւ այն հանգամանքը, որ իշխանների եւ կաթողիկոսների հետ նորա անունն էլ ծագւում է որպէս թուագրութեան որոշիչ. Բասաղի Յովհաննայ վանքում գրուած է մի աւետարան «ի թուականիս Հայոց ՉԾԹ (= 1310): Յաշխարհակալութեան ազգիս Նետողաց Ղարապանտա Սանին եւ Հայոց թագաւ. Ալինախին, եւ ի դասապետութե. մեծ իմաստնոյ Եսայոյն» (*****): Թագէոս

գրիչը 1303 թուին իւր յիշատակարանի ժամանակը որոշում է՝ «զիտապետք Հայոց տր. Գրիգոր (Անավարդեցին), տր. Ջաքարէ (Թագէոս առաքեալի վանքի առաջնորդը իբրեւ Եղգարիս կամ փոխանորդ կաթողիկոսի արեւելեան Հայաստանում) եւ տր. Ստեփանոս Աղուանից (կաթողիկոս) եւ վարժապետ Եսայեայ» (*): Ջեսար Օրբէլեանը Սելիմի կարաւանատան արձանագրութեան մէջ չէնքի սկզբնաւորութիւնն ու վախճանը Նչեցու անուան հետ է կապում (**). «սկիզբն... բարունապետին Եսաւայ եւ կատարումն աղօթիւք նորա. թվին 22Ա» (= 1332): Գրիգոր քահանան 1335 թուին իւր յիշատակարանը Սանի, Լեւոն թագաւորի եւ Յակոբ կաթողիկոսի անուան հետ թեւագրում է «եւ ի վարժապետութի. մանկանց Սիոնի տն. իմոյ վստական անյաղթ հոգեւորին յեսանա» (***): Աւագ գրիչը եւ ծաղկողը 1337 թուին Թաւրիզում գրելով մի նկարագրող աւետարան Բուրթել Օրբէլեանի որդի Բեղգենի համար, թուագրում է ի միջի այլոց եւ «ի գալարապետութե. մեծ հոգեւորին Եսայեայ» (****): Նոյն Աւագը նոյն թուին գրել է «Եղգարան եւ տետրակ» կամ «Սաղգիրք» Սիւնեաց մետրապօլիտ Սարգսի համար եւ թուագրել է ի միջի այլոց «եւ ի լուսաւոր վարժապետութե. մեծին Եսայեայ» (****): Ուրքան եւ չափազանցութիւն լինին գովասանքների մէջ եւ մասամբ հետեւողութիւն սովորական դարձած արտայայտութիւնների, անուրանալի է մարդու մեծ հրաշակն ու հեղինակութիւնը, որ կ'երեւայ եւ Գլաձորի վաթսուներեայ արդիւնքի մէջ, որչափ յաջողուել է մեզ ի մի բերել:

Գլաձորի գոյութեան ամենահին տեղեկութիւնը ստանում ենք մի շատ թանգարժէք ձեռագրից, որ գրուած է այնտեղ 1280 թուին. ձեռագրի ստացողն է Նր «մեծ հոգեւոր Ներսէս», յիշուած է նաեւ «նուստտ ոգիս Եսայի հետեւող եւ աշակերտ սբ. առնն Աճյ Ներս. վրի.». հէնց այս նկատողութիւնը գրուած է Նչեցու ձեռքով. նա ունի եւ փոքրիկ լրացումներ ու սրբագրութիւններ (159ա, 166ա): Մի ուրիշ յիշատակարան բուն գրչի ձեռքով տալիս է աւելի տեղեկութիւններ 145ա, (պատկ. 198). «Շնորհաւք եւ ողորմութեւն. Աճյ կատարեցի գտառս Աճաշունչ, ես փցուն եւ ապիկար գրող Լուսեր ի վայելումն սբ. եւ ամենագով վրն. (վարդապետին) Ներսեսի...»: Բայց այս գրիչը չէ վերջացրել, այլ շարունակել է մի երկրորդ գրիչ Թովմա վարդապետ. «Աճ ողորմի Ներսէս վրժապետին եւ ինձ Թովմա վր. իս, որ զանարուեստ

(*) Ձեռ. Էջմ. N° 1111/1097:

(**) Ձեռ. Էջմ. N° 1298 նս:

(***) Ձեռ. Էջմ. N° 67:

(****) Ձեռ. Էջմ. N° 1844 նս, 408ա:

(*****) Ձեռ. Էջմ. N° 658/749, 115բ:

(******) Ձեռ. Էջմ. N° 1844, 618ա:

(******) Ձեռ. Էջմ. N° 182/206 եւ փրկալէմեան Նշխարք Հայոց պատմ., անտիպ:

(******) Յաւել. Բ., 24:

(******) Ձեռ. Էջմ. N° 1266/1276:

(******) Ձեռ. Էջմ. N° 240/380:

(*) Ձեռ. Էջմ. N° 3606, 273ա:

(**) Ջալալեան Բ., 164: Ալիշան, Սիսական, 165: Ouarova, Mat. Kabk. Arx. XIII. 118:

(***) Ձեռ. Էջմ. N° 1120/1141 (Կար. 1099):

(****) Ձեռ. Էջմ. N° 368/212, 310բ:

(******) Քարամեան, Յուզ. Բերլինի արք. մատենադարանի, եր. 26: